

(հարցազրույց բանաստեղծուհի Նաիրա Համբարձումյանի հետ)

-Նաիրա, քո բանաստեղծական տեսողությունն այնքան մաքուր է: Քեզ և մի քանի այլ ժամանակակից բանաստեղծների կարդալիս մարդ մտածում է, թե Աստված բանաստեղծին մի նոր հնարավորություն է տվել՝ առարկաներին, կենդանիներին անուններ տալու, տարբերակելու առարկաները քառսից, վերահայտնագործելու աշխարհը: Քո երկրորդ գրքի վերնագիրն էլ այս առումով շատ խորհրդանշական է՝ «Ես բառ եմ դարձել»:

-Այո, բանաստեղծը կարող է թափանցել երևույթների խորքը, անգամ նոր անուններ տալ դրանց: Դա մեծ երջանկություն է: Շատ հաճելի էր, երբ ուսանողներիցս մեկը գիրքս ընթերցելուց հետո ինձ այսպիսի հաղորդագրություն ուղարկեց. «Շնորհակալություն, որ Դուք բառ եք դարձել»: Ես իսկապես նոր ուղիներ եմ որոնում, նոր բառեր՝ իրականությունը բանաստեղծություն դարձնելու համար: Ուզում եմ նոր պատկերներ բերել գրականություն, բայց նոր պոեզիա ասելով՝ չեմ պատկերացնում ինչ-որ օտարամուտ, օտարահունչ երևույթ: Այն պետք է բխի մեր ազգային արժեքներից, միայն թե գրված լինի ավելի թարմ շնչառությամբ:

-Արի մի քիչ ավելի հստակեցնենք, թե ինչ ենք հասկանում՝ ազգային արժանատիներից չկտրված բանաստեղծություն ասելով: Այս խնդրին շատ են անդրադառնում, սակայն կարծես անհասկանալի է մնում, թե ի վերջո որո՞նք են այդ ազգային արժեքները, որ պետք է պահպանի այսօրվա գրողը:

-Չպետք է հրաժարվես քո ազգային ինքնությունից: Արևմտյան և արևելյան մտածողություններն ուսումնասիրելուց հետո պետք է շուռ գալ և նայել, թե դու ինչ ունես: Միայն այդ դեպքում ստեղծագործությունը կապի տևական ժամանակի մեջ: Գրողի համար չափազանց կարևոր է կիրթ լինելը, օտար լեզուների տիրապետելը: Թարգմանական գրականությունը շատ հարուստ է, և անհրաժեշտ է բնագրերով գրական գործեր ընթերցել, որովհետև միայն հիմնավոր կրթություն ստացած մարդը կկարողանա ընտրել-համադրել ազգային արժեքները ժամանակի պահանջների հետ: Նաև գրական հոտառություն է պետք, որ կարողանաս առանձնացնել լավ գրականությունը, այն, որից արժե ինչ-որ բան վերցնել քո երկրի գրականության համար:

-Ի՞նչ ասել է լավ գրականություն: Կարծես վերանում են լավ ու վատ գրականությունները տարբերակելու օբյեկտիվ չափանիշները:

-Պետք է շատ կարդալ, որ կարողանաս գոնե քեզ համար գտնել այդ չափանիշը և առանձնացնել լավն ու վատը:

-Այսօր շատ գրողներ կարծում են, որ գրականությունն արդեն իր առջև ինչ-որ արժեքներ տարածելու խնդիր չի դնում: Ամեն բան սուբյեկտիվանում է: Ըստ քեզ՝ այնուամենայնիվ պահպանվու՞մ է ինչ-որ բացարձակ արժեք, բացարձակ չափանիշ:

-Այդ չափանիշը միշտ էլ եղել է: Այլ հարց է, թե գրական դաշտն ինչքան է լայնացել: Նկատի ունեմ այն հանգամանքը, որ դրսի հետ շփումներն այսօր շատ ավելի սերտ են, քան, ասենք, տասնհինգ տարի առաջ: Նշանակում է՝ լայնանում է աշխարհընկալման պարագիծը: Այն գրողը, որն անընդհատ աշխատում է, կարողանում է հասարակական կյանքի, միջմշակութային շփումների այս ծավալումից շատ բան վերցնել իր գրականության համար լավ իմաստով: Այստեղ դարձյալ առնչվում ենք այն հարցին, թե որքանով է գրողը կարողանում պահպանել իր ազգային արժեքը: Բայց ես կարծում եմ, որ բոլոր գրական իրողությունները, որ այսօր տեսանելի են մեր գրական դաշտում, անհրաժեշտ են գրականության զարգացման համար: Բոլորն իրենց տեղն ունեն, նույնիսկ ամենաշատ

քննադատվողները, որովհետև անկախ հասարակության զարգացման մակարդակից, անկախ այն հանգամանքից՝ գրքերն ունեն ընթերցող, թե ոչ, գրականությունը զարգացող երակ է, և գրողներից յուրաքանչյուրը, պատկերավոր ասած, իր վտակն է բերում: Ժամանակն ամեն բան կորոշի: Ժամանակ կգա, երբ ամեն բան կընկնի իր տեղը, կտարբերակվեն մնայունն ու ոչ մնայունը:

-Այսօրվա հայ գրականությունը պե՞տք է ունենա և ունի՞ արդյոք կրթելու, լուսավորելու նպատակ:

-Բոլոր ժամանակներում էլ գրականությունը պետք է նման նպատակ ունենա: Այսօր էլ այդպես է, բայց կան նաև այլ իրողություններ: Գրականությունը, մասնավորապես պոեզիան այսօր ավելի սոցիալական է դարձել: Դա ժամանակակից կյանքի պահանջն է: Խորհրդային տարիներին, օրինակ, չէր կարող սոցիալական պոեզիա լինել: Կային թեմաներ, որոնք մշտապես արծարծվում էին, կային, որ մշտապես փակ էին: Ընթերցողին իսկապես հուզող հարցերն են այսօր ամենից առաջ դրված գրականության առաջ՝ առօրյան, առօրյայում ծառայած խնդիրները: Եվ այս երևույթը չի կարելի դիտել միայն կենցաղային մակարդակի վրա: Այս ամենի նպատակը վերջին հաշվով նորից վեհին է հանգում, ինչպես առաջ էր: Չէ՞ որ դու գրում ես մի բան, ներկայացնում ես մի վիճակ՝ ցանկությամբ, որ հետո քո պատկերած իրականությունը գոնե փոքր-ինչ բարելավված տեսնես:

-Կարելի՞ է ասվածն ընդհանրացնել այս կերպ. գրամուկների համար սոցիալական պոեզիան վեր է ածվում կենցաղագրության, այնինչ տաղանդավոր բանաստեղծի առաջ բացում է նոր հորիզոններ, առիթ տալիս քիչ առաջ մեր նշած այն ընկալմանը, որ բանաստեղծին Աստված աշխարհի իրողություններն անվանակոչելու մի նոր հնարավորություն է տվել:

-Միանշանակ: Պետք է տարբերել սոցիալական պոեզիան կենցաղագրությունից: Եթե մեկը տրոլեյբուս է նստել, հետո բանաստեղծություն գրել այդ մասին, կարողում ես ու զգում, որ տողերը կարծես թափվում են, բանաստեղծության մեջ բանաստեղծություն չի մնում: Այլ բան է, որ իսկական բանաստեղծը տրոլեյբուսը կարող է հրաշալի բանաստեղծության վերածել: Երբ բանաստեղծության պատկերների ներսում կա սոցիալական խնդիր, ստեղծվում է սոցիալական պոեզիա: Այսօր շատ բանաստեղծների, հատկապես երիտասարդների գրչի տակից դուրս են գալիս գործեր, որոնք նույնիսկ շփոթեցում են, այդքան որ նոր են ու անսովոր, թեև կարող են գրված լինել բազմիցս շոշափած թեմաներով:

-Բայց արդյո՞ք մեր այսօրվա պոեզիան անմիջականորեն բխում է օրվա խնդիրներից, թե՞ ավելի շատ փոխառված է եվրոպական ու ամերիկյան պոեզիայից, հաճախ վերացական է ու մեր իրականությունից կտրված:

-Իմ պոեզիան որ հաստատ բխում է մեր իրականությունից: Եվ առհասարակ, չեմ կասկածում, որ մեր ժամանակակից պոեզիան անմիջականորեն կապվում է օրվա իրականության հետ: Ես չեմ պատկերացնում, որ ինչ-որ մեկը սկսի գրել մի բանի մասին, որի միջով ինքը չի անցել: Կարծում եմ՝ սոցիալական պոեզիայի ստեղծման գործոններից մեկը գործազրկությունն է: Դա նշանակում է ոչ թե այն, որ մարդը պետք է գործազուրկ լինի, որ սոցիալական պոեզիա ստեղծի, այլ այն, որ գործազրկությունը ստեղծում է տարաբնույթ հոգեբանական-հասարակական խնդիրներ, որոնք միայն ուշադիր հայացքով քննելիս ես հասկանում, որ հիմքում գործազրկությունն է: Այդպիսի խնդիրներ են հասարակությունից օտարվածության զգացումը, չգնահատվածության ու լքվածության զգացումը: Առկա խնդիրները մի մթնոլորտ են ստեղծում, որոնք բանաստեղծության մեջ վերածվում են այնպիսի պատկերների, ինչպիսիք տեսնում ենք:

-Ըստ քեզ՝ մեր ժամանակակից պոեզիան քայլու՞մ է աշխարհի պոեզիայի հետ համընթաց:

-Կարծում եմ՝ քայլում է և քայլելուց բացի նաև մրցակցում է: Մենք շատ տաղանդավոր բանաստեղծներ ու արձակագիրներ ունենք և՛ ավագ սերնդի, և՛ երիտասարդների մեջ:

-Կարող է հայ ընթերցողն իր հարցերի պատասխանները փնտրել արդի հայ պոեզիայում:
-Դա կախված է այն բանից, թե նա ինչպիսի ընթերցող է: Եթե նա սերիալ նայող ընթերցող է, ապա չի գտնի, եթե այնպիսի ուսանող է, որը բուհ է գնում միայն հազուստն ու շաբաթ ցույց տալու համար, դժվար թե գտնի, բայց այն ուսանողը, որի համար սովորելն ինքնանպատակ է, այն ուսանողը, որը ցանկանում է ձևավորվել ու կայանալ որպես անհատ, իսկական քաղաքացի իր երկրի համար, ինձ թվում է՝ կարող է գտնել ոչ միայն պատասխաններ, այլև հոգևոր բավարարվածություն: Միայն թե մեր հասարակության մեծ մասը դեռ չի փնտրում այդ պատասխանները: Այսօր էլ ընթերցող կա, բայց քիչ: Բայց դա նաև սոցիալական պայմանների խնդիր է. ի՞նչ պահանջես մի հասարակությունից, որ այսպիսի սոցիալական վիճակում է գտնվում: Ամբողջ աշխարհում գրական շուկա կա, զարգանում է գրահրատարակչական գործը: Համապատասխան կազմակերպություններն ընտրում են լավագույն գրողներին, հետո զբաղվում նրանց գովազդով, իմիջով, տարածում նրանց գործերը և շահույթ ստանում: Իսկ մենք այսօր այս ոլորտում ոչինչ չունենք՝ սկսած դպրոցից: Դպրոցական ծրագրով նախատեսված վերջին հեղինակից՝ Հ. Մաթևոսյանից հետո ուսուցիչը ոչինչ չի կարդում, ուր մնաց թե աշակերտներին խորհուրդ տա կարդալ: Բայց ինձ թվում է, որ պետք է լավատես լինել: ՄԻ օր այդ ընթերցողը կգա:

-Որքանով է մեր այսօրվա պոեզիան անհատականությունների պոեզիա, և որքանով է այն «սերնդային»: Ի՞նչ ես կարծում, տարիներ հետո մեր ժամանակի մասին խոսելիս ի՞նչ ընդհանուր միտումներ կառանձնացնեն: -Ինձ թվում է՝ ինչպես ձևավորվել է 60-ականների սերունդ, 70-ականների սերունդ, 80-ականների սերունդ, ինչու՞ չէ, արդեն նաև 90-ականների սերունդ, կգա մի ժամանակ, երբ կառանձնացնեն նաև 21-րդ դարասկզբի սերունդը: Այսօր շատ դժվար է ասել, թե դեպի ուր ենք գնում, ինչ ճանապարհով ենք գնում: Երբ մի քսան տարի անց հետ նայեն, կընտրեն մի գլխավոր հատկանիշ ու այդ հատկանիշով կբնորոշեն արդի գրական ընթացքը: Բայց մի բան է, երբ բոլորը հոսքով գնում են, մեկ այլ բան է, երբ նրանցից մի քանիսը ցատկ են կատարում դեպի առաջ, պոկվում-առանձնանում են բոլորից: Կլինեն անուններ, որոնք ավելի շատ բան կվերցնեն այս դարից ու կբերեն գրականություն, քան «մարմանդ գետով հոսողները»: Շատ բան է կախված այն բանից, թե նրանք ինչը կպահպանեն ընդհանուր միտումներից և ինչը կմերժեն: Իսկ այսօր ես ոչնչից չեմ դժոհում: Մեր գրականությունը զարգանում է այնպես, ինչպես պետք է զարգանա:

-Ավանդաբար գրականության տարածքն առավելապես եղել է տղամարդկանցը, իսկ այսօր վիճակը փոխվել է: Ըստ քեզ՝ ինչու՞ է սա պայմանավորված, արդյո՞ք միայն կնոջ ձեռք բերած ավելի մեծ ազատությամբ:

-21-րդ դարի կինը շատ ուժեղ է և՛ մտավոր, և՛ շատ այլ կարողություններով: Երևույթների խորքերը թափանցելու, վերլուծելու առումով շատ տղամարդիկ շատ կանանցից շատ բան ունեն սովորելու: Դա միայն ազատությունով պայմանավորված չէ: Մենք այսօր էլ ապրում ենք մի հասարակության մեջ, որտեղ շատ բաներ չի կարելի անել: Բազմաթիվ այլ գործոններ կան, որոնք հանգեցնում են կատարելագործման: Ինֆորմացիայի գերառատության ժամանակ է, կինը լավ կրթություն կարող է ստանալ: Ուղեղը դառնում է շատ ավելի ճկուն, քան առաջ էր, և այս կատարելագործումը ընթանում է ամեն օր:

-Իսկ դու տարանջատում ես կանանց պոեզիա և տղամարդկանց պոեզիա եզրերը:

-Չեմ տարանջատում: Չեմ ընդունում զուտ կնոջական հոգսերի ճղճիմ պոեզիան: Եթե ես բանաստեղծուհու տողերից զգացի, որ նա միայն լվացքի փոշու հոտն է բերում գրականություն, ապա նրա ստեղծածը պոեզիա չեմ համարի: Տողերից պետք է զգացվի, որ կինը մտածում է. քնարականի կողքին նաև ուժ է հարկավոր: Պոեզիան առհասարակ մարդկանց մտածող տեսակի բացահայտումը պետք է լինի:

Հարցազրույցը վարեց Մարիան Կարպետյանը